



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


Հ. Ա. Խ. Հ.

Հ. Ժ. Կ. ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՄԱՍՉԵԼԻ ՍԵՐԻԱ № 2

ԱՐԴՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Ս Ա Յ Ա



635

Ա - 15

ՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԴՔՈՂԿՈՄԱՑԻ

ԼԵՆԻՆԱԿԱՆ

1931

30 JUL 2018

Հ. Ա. Խ. 2.


Հ. Ժ. Կ. ԳԻՏԱ-ՀԵՏԱԶՈՏՈՒԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

635 ՄԴ
U-15

ՀԱՆՐԱՍՏԱՆԻ ՍԵՐԻԱ Խ 2

ԱՐԴՎԻԿ ՍՊԱԾՅԱՆ

Ս Պ Յ Ա



ՀՐԱՅՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՈՂՔՈՎԿՈՄԱՆ

ԼԵԽԻԱԿԱՆ

1931

25.07.2013

Պայմանագիր է առաջնային
համամեջ առաջ առաջակային
աշխատավոր աշխատավոր
աշխատավոր աշխատավոր
աշխատավոր աշխատավոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՎՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԺԱՄԴ» սպ. Լենինականում: Պատվիր № 179
Դրամեզվար և 2440

1423
46

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սոյան հին կուլտուրական բույս ե, վոր լայն տարածված ե Արևելյան լեռներում. Զինաստանը համարվում է Սովոր հայրենիքը, ուր նրա մշակությունն ունի հազարավոր տարիների պատմություն։ Ներկայում Սոյան մշակվում ե ամենուրեք և ոգտագործվում ե տնտեսության մեջ բարձրացնեակ նպատակներով։

Հանդիսանալով Զինաստանում, Ցաղոնիայում և այլ Արեգելիքան լեռներում իբրև գլխավոր սննդանյութերից մեկը, նա միաժամանակ ոգտագործվում ե գյուղատնտեսական արդյունաբերության մեջ սուրճ, կակաո, լուղ, պանիր, բժշկական պրեպարատներ, պայմանագիր նյութեր, լակ, ներկեր, ոճառ և այլ ապրանքներ պատրաստելու համար։

Նրա ցանքսերի տարածությունը տարեց տարի լայնանում ե, ինչպես, որինակ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ուր

1922 թվին ցանված եր	455.000 հեկտար, իսկ
1923 » » »	668.000 »

այդպիսով մի տարվա ընթացքում ցանքսերի տարածությունը լայնացավ 46,8 տոկոսով։ Հետագա տարիներին ցանքսերի տարածությունը ավելի ու ավելի լայնանալով, այժմ Սոյան դրավում ե աշքի ընկնող տեղ Միացյալ Նահանգների տնտեսության մեջ։

Խորհրդային միության սահմաններում Սոյան նոր մշակութ ե, բայց արդեն սկսել ե տարածվել հյուսիսային Կով-

կառում, Ռէկրայնալում, Վրաստանում, Արխագիայում, Հեռավոր
Արևելքում և Խորհրդային Ռուսաստանի մի շարք ցղաններում:

Ծնորհիվ իր հատիկների մեջ յուղի և սպիտակուցային
նյութի բարձր տոկոս ունենալուն, Սոյան հսկայական նշանա-
կություն և ստանում ներքին շուկայի համար, սպիտակուցա-
յին նյութի պրոբլեման լուծելու խնդրում։ Մյուս կողմից Ար-
տասահմանյան շուկայի պահանջը անընդհատ աճում եռ այդ
պատճառով մեր առջե որվա հարց եռ դառնում Սոյաի մշա-
կույթի լայն տարածումը միութիւն սահմաններում։

Այդ տարածման ու զարգացման ամենալավ գրավականն
հանդիսանում է զյուղատնտեսության արտադրության խոչո-
րացումը և նրա մեքենայացումը, վորոնք առաջին հերթին
կտղահովեն Սոյաին նման թանգարժեք բույսի ինքարժեքի ի-
շեցումը։

Ներկայումս Սոյաի մշակույթի պրոբլեման դրված է մեզ
մտածության կենտրոնում։ Նրա ցանքսերի տարածու-
թյունը տարեց տարի լայնանում է, և յեթե 1925 թվին նա-
հագառար եր միայն 17.000 հեկտարի, 1929 թվին 76.000 հ.,
արգեն 1950 թվին սենք ունենք 350.000 հեկտար, իսկ 1932
թվին Արխատանքի և Պաշտպանության Խորհրդի հատատած
պլանով Սոյան գրավելու յե վոչ պակաս 1.500.000 հեկտարից։

Այս քանակը պետք է ընդունել, իրրե մեր աշխատանքնե-
րի նվազագույն չափը, վորի համար առաջին հերթին անհրա-
ժեշտ ե լայն կերպով ժողովրդականացնել Սոյաի մշակույթը
մեր կողմեկտիվ ու անհատական աշխատավոր տնտեսություն-
ներում։

2. ՍՈՅԱԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սոյան հարավային բույս է. նա ունի հուսիսային նույն
սահմանը, ինչ վոր յեզիպտացորենի միջահաս տեսակները։

Սոյան պատկանում է լոբիածաղիկների ընտանիքին նույն

խմբին, վորին պատկանում են լոբին, սիսեռը, յոնջան, լիրեք-
նուկը, կորնգան, վիկը և ուրիշները։

Նա սերմերով բազմա-
ցող միամյա բույս է. սեր-
մերը առաջանում են պա-
տիճների մեջ, վորոնք սո-
վորաբար կրում են մեկեց—
լեռեք, յերեմի չորս սերմ.
Կուլտուրական Սոյան ա-
ռաջ է յեկել վայրի բույ-
սից, վորը վայրի զբու-
թյամբ գեռ ևս շարունակում
է պահպանել իր գոյությու-
նը վորոշ տեղերում, զիստ-
վորապես իր հայրենիքում,
Զինաստանում։

Կուլտուրական Սոյան

հայտնի է 1000-ից ավելի
աեսակներով, վորոնք տարբերվում են իրարից իրենց արտաքին
ձեվով, սերմերի ու պատիճների գույնով, չափով ու ձևով,
աճման ժամանակաշրջանով և ծաղիկների գույնով։

Սերմերը լինում են գեղին, կանաչ, շագանակագույն և այլ
բար ձևի տարբերվում են գնդաձեւ, ձվաձեւ, տափակ և
պուռցիկ սերմեր։ Միատեսակ չե և սերմերի մեծությունը.
վորը կ սերմերից սկսած, վորոնց 1000 հատիկի քաշը հավա-
սար է 50 գրամմի, Սոյան ունի անպիսի տեսակներ, վորոնց
1000 հատիկի կշիռը հասնում է 250 գրամմի. (ցորենի 1000
հատիկը առվորաբար կշռում է 20—40 գրամ)։

Առանձնապես բարձր գնահատվում են այն սերմերը, վո-
րոնք ունին բաց գեղին գույն, միջին մեծություն, գնդաձեւ են
և փայլուն։



Սոյաի բույսը

Բույսը լինում ե բարձր և ցածր, ուղղահայաց և փաթթվող:

Վերջապես, տեսակները տարբերվում են իրենց աճման ու հասունացման շրջանով, վորը տատանվում ե տարբեր տեսակների համար 75-ից մինչև 200 որվա սահմաններում:

Սույափ ցողունը հասու և և բավական ամուր. նա ունի աերեններով հարուստ ճյուղեր. ցողունի բարձրությունը կախված է տեսակից ու տեղի պայմաններից. 20—30 սանտիմետրից նա հանում ե 1—1,5 մետրի: Լենինականի տեսակափորձառողամասում ցանված տեսակներն ունին 23—51 սանտիմետր բարձրություն:



Սույափ նյուղը պատիճներով

Ցողունը, ճյուղերը և տերենները ծածկված են սպիտակ կամ գորշ գույնի կոշտ մազմզուկների խիտ ծածկոցով, վորը պաշտպանում ե բույսը զանազան վնասատուներից, իսկ յերաշտի ժամանակ, նաև ավելորդ գոլորշիացումից:

Սույափ ծաղիկները փոքր են, սպիտակ, մանիշակագույն կտոք վարդագույն. գնդաձև կամ մանգաղաձև պատճեն են և ծածկված են մասնաւոր պատճենում:

Են մազմզուկներով: Նրանք առաջանում են թե զլբավոր ցողունի և թե ճյուղերի վրա:

Գատիճների, հետևապես և սերմերի քանակը մի բույսի վրա կախված ե նրա տեսակից, հողի հատկությունից, կլիմական պայմաններից:

Լրիվ հասունացման շրջանում տերենները թափվում են, իսկ պատիճները մնում են ամուր նստած բույսի վրա:

Սույան ունի լայն ճյուղավորվող արմատ, վորը հասնում է 150—170 սանտիմետր խորության. շնորհիվ այդ հանգամանքին, Սույան հնարավորություն ունի ոգտագործելու հողի խոր շերտերում գտնվող մննդանյոթերն ավելի լավ, քան մյուս բույսերը, վորոնք չունեն այդ չափ ճյուղավորված ու խորը գնացող արմատներ:

Բացի այդ, Սույափ արմատները արտադրում են իրենցից թթու հյութ, վորի մեջ լուծվում են ջրի մեջ գժվար լուծվող աղերը, վորոնցով և մնվում ե բույսը, այնպես վոր Սույան կարողանում ե սննդավոր գտնել ու զարգանալ այնպիսի հողերում, վորտեղ ուրիշ մշակույթներ վատ են զարգանում բավականաշափ սննդավոր չինելու պատճառով:

Միաժամանակ, շնորհիվ իր զարգացած ու խորը գնացող արմատների, Սույան ոգտագործում ե հողի խոր շերտերի խոնավությունն ու այդ ե պատճառը, վոր նա յերաշտի ժամանակ գիմանում ե ջրի պակասին: Հույսիսային կովկասի փորձակայանների դիտողությունները ցուց են տալիս, վոր Սույան կարողանում ե դիմանալ յերաշտին նույնքան լավ, վորքան յեզիդացորենը, ու չոր տարիներին նրա բերքը, համեմատած հացահատիկների հետ, պակասում ե չատ քիչ:

Սույափ, ինչպես և այլ լրիածաղիկների, մի գնահատելի հատկությունն ել այն ե, վոր նա իրեն համար անհրաժեշտ ազոտը վերցնում ե վոչ թե հողից, այլ ուղղակի սղից:

Ազոտը բույսերի համար անհրաժեշտ մննդանյութերից

ժեկն և, առանց փորի գոչ մի բույս չի կարող տճել ու ըերք տալ:

Մինչ զեռ բույր բույսերը իրենց համար անհրաժեշտ ազատավին անունդը վերցնում են հողից. լորիածաղիկները, վորոնց թփում և Սոյան, ազոտն ստանում են անմիջապես ողից:


Սոլաի արմատների վրա ապրում են աչքի համար անտեսանելի փոքրիկ ետակներ,—բակտերիաներ, վորոնք նրանց վրա տուաջացնում են փոքրիկ գնդիկներ—պալարներ։ Բակտերիաներն ապրում են այդ պալարների մեջ, կյանում ու իրենց մարմի մեջ հավաքում են հողի ծակոտիների մեջ դանվող ողի ազոտը։

Սոյան իր հերթին լուծում
ե իր արմատների վրա ապրող բակտերիաներին իր հյութերով և սնվում ե նրանց հավաքած ազոտով։ Սոյան ունի իրենհատուկ բակտերիաները, և այն հողերում, վորտեղ յերբեք Սոյա չի ցանվել, նման բակտերիաներ չկան։

Հետագայում, Սոյաից հետո, հողի մեջ, նրա արմատների հետ բիասին, մնում են բազմաթիվ բակտերիաներ, վորոնք հարստացնում են հողը ազոտով ու նպաստում են նրա հետագա ընթացառվության բարձրացմանը։

3. ՍՈՅԱԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու և կենդանիների անունդի համար գործադրվող մթերքների արժեքը բնորոշվում է նրանց պարունակած պլաս-



վոր սննդանյութերի, այն և՝ սպիտակուցի ու յուղի քանակով և որգանիզմի կողմից յուրացնելու աստիճանով։

Այդ ուղղությամբ կատարված ուսումնակրություններն ու հետազոտությունները ցույց են տալիս, վոր սոյաի սերմերը հարուստ են որգանիզմի համար պահանջվող սննդանյութերով ու նրանցից պատրաստված մթերքները լավ են յուրացվում որգանիզմի կողմից։

Հատիկները իրենց մեջ պարունակում են 17—18-ից մինչև 22 և ավելի տոկոս յուղ ու 24—46 և ավելի տոկոս սպիտակուցային նյութեր։

Սոլաի նշանակությունը, իրեկ ուժեղ սննդանյութ, յերեսում և հետեւյալ համեմատական տախտակից։

Բ Ա Խ Ա	ԱՊԻՑԵԿՈՒՑԱՇԽԵՐՆ	ՏԻՎԻ ՑՈԿՈՒԾ
Սոլա	35.91	20.64
Սիսեռ	24.6	1.0
Ցորեն	14.34	1.84
Ցեղիպացորեն	9.72	6.46
Բրինձ	8.0	2.0
Չու	14.8	10.5
Միս	18.6	18.5
Գանիր	20.9	1.0

Այսպիսով, թե յուղով և թե սպիտակուցային նյութերով սոյան ավելի հարուստ ե վոչ միայն հացաբուլսերից, այլև այնպիսի տարածված սննդանյութերից, ինչպես ձուն, միսն ու պանիրն են։

Բացի այդ սոյան պարունակում ե իր մեջ մեծ քանակությամբ վիտամիններ, վորոնք հատուկ են միայն բույսերին և անհրաժեշտ են ամեն մի կենդանի որգանիզմի գոյության հա-

մար. վիտամինների պակասի գեպքում որդանիզմը թուլանում և մեռնում ե:

Շնորհիվ՝ այդ բոլոր արժեքավոր հատկությունների, սույան բազմակողմանի կերպով ոգտագործվում ե և նրանից այժմ պատրաստվում ե ավելի, քան հիսուն նյութ:

Նրա ոգտագործման հիմնական ձևերն են՝

ԿԱՆԱԶ ԲՈՒՑՍ — Ոգտագործվում ե իբրև արոտատեղ, խոտ, սիլոս և պարարտանյութ:

ՀԱՄԱՅՆ ՀԱՅԻԿՆԵՐԻՑ — Պատրաստվում են կերակուրներ, տապակոց, թխվածք, սուրճ, կակաո, բուսական և խտացրած կաթ, պանիր.

ԿԱՆԱԶ ՊԱՏԻՃՆԵՐԻՑ — Ծառայում են իբրև բանջարեղեն, կոնսերվ, սալաթ.

ՔՈՒՍՊԻՑ և ԱԼՅՈՒՐԻՑ — Պատրաստվում են կեր անապուների համար, մարդկանց մնունդ, պարարտանյութեր, բժշկական պրեպարատներ.

ՅՈՒՂԻՑ — Ծառայում ե ուտելու համար, նրանից պատրաստվում են պալմուցիկ նյութեր, լակ, ներկեր, ոճառ, կառւշուկ և այլն.

4. ՍՈՅԱՆ ԻԲՐԵՎ ՀՈՂԻ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Խչպես վերևում ասացինք, սոյան, իբրև լորիածաղիկ, շնորհիվ իր արմատների վրա ապրող բակտերիաների, հարստացնում ե հողը ազոտով. բացի այդ նա տալիս ե հողին և որդանական նյութեր. սոյան բերքահավաքից հետո դաշտում մնում են տերևներ, իսկ հողում արմատներ, վորոնք բայթայվելով, տալիս են հողին մննդանյութ ու լավացնում են նրա ֆիզիքական դրությունը:

Միևնուն ժամանակ, ունենալով զարգացած ու խորը գնացող արմատներ, սոյան մնունդ և վերցնում հողի խորը

շերտերից, իսկ վերևի շերտերը շարունակում են հարստանալ մննդանյութերով:

Վերջապես, սոյան իր տերևներով տալիս ե ավելի շատ ստվեր, քան մյուս միջներկյա բույսերը և դրա հետևանքով մոլախոտերը զարգանում են թույլ ու դաշտը սոյաից հետո մնում ե աղատ մոլախոտից, վոր նպաստում ե հետագա ցանքների բերքատվության բարձրացմանը:

5. ՀՈՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՈՒՄԸ

Հողի վերաբերմամբ սոյան պահանջկոտ չե. Նա կարող է աճել ամեն տեսակի հողերում, բացառությամբ ծանր ու ճահճացին հողերի, չոր ավագների և աղուտների:

Հողի մեջ հարկավոր բանակությամբ խոնավություն հավաքելու նպատակով, վարը անհրաժեշտ ե կատարել վաղ աշնանը, 13-16 սմ. խորությամբ. այսուհետեւ գարնանը, հենց վոր հնարավոր լեղավ դուրս գալ դաշտ, հողամասը պետք է փոցիւել, վոր խոնավությունը պահպանվի հողի մեջ:

Պետք է դաշտը փոցիւել և այն դեպքում, լեթե ուժեղ անձրևների հետևանքով հողը կեղեակալել ե:

Յանքսին նախորդող որերին, դաշտը սովորաբար ծածկված է լինում մոլախոտերով, վորոնցից ազատվելու համար անհրաժեշտ ե կատարել յերեսավար բազմախոփանի գութանով, կամ վոչնչացնել մոլախոտերը կուլտիվատորի միջոցով:

Աշնան վար չունենալիս, պետք է վարել վաղ գարնանը և անմիջապես փոցիւել:

Նկատված ե, վոր սոյան աշնան վարով ավելի բերք է տալիս քան գարնան վարով:

Սոյաի հաջող մշակութիւն և բարձր բերքի անհրաժեշտ նախապայմանը մոլախոտերից ազատ և լավ մշակած հողն եւ

6. ՆՈՐ ՀՈՂԵՐԻ ՎՐԱ ՍՈՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ՔԻՉ ԲԵՐՔ Ե ՏԱԼԻՒ

Իբրև լորիածաղիկ բույս, սոյան վերցնում ե ազոտը ո-
ղից. մի շարք հետազոտություններից յերեսում ե, վոր սոյափ
բակտերիաները մի հեկտար ցանքսի վրա հավաքում են ողից
այնքան ազոտ, վորքան կստանա մի հեկտար հողամասը
38400 կգր. (2400 փութ) գոմաղբով պարաբռացնելուց:

Բայց ամեն մի հողի մեջ նման բակտերիաներ չկան, և
այդպիսի հողերում սոյափ արժատների վրա պալարներ չեն գո-
լանում ու այդ պատճառով սոյան ազոտային սննունդն ստա-
նում է վոչ թե ողից, այլ հողից և դրա համար նրա բերքը
ցածը ե լինում:

Սոյափ բերքը նոր ցանքող գալրերում բարձրացնելու հա-
մար, անհրաժեշտ—ե գարակել հողը համապատասխան բակ-
տերիաներով, վոր կարելի լի անել յերկու ձեփով՝

Կամ ցանքսից առաջ դաշտում ցրում են արդեն գարակ-
ված հող, վորը վերցնում են այնպիսի հողամասերից, վոր-
տեղ սոլափ արժատների վրա գոլացել եյին պալարներ և կամ
ցանելուց առաջ սերմերը վարակում են բակտերիաներով. վեր-
ջին դեպքում, պետք ե թրջել սերմերը ջրով և խառնել բակ-
տերիաներով վարակված հողի հետ:

Այժմ աշխատում են հատուկ լաբորատորյաներ, վորոնք
բազմացնում են այդ բակտերիաները և տուփերով ուղարկում
են ցանկացողներին:

Ամեն տուփի հետ ուղարկում են մանրամասն գրափոք
ցուցմունքներ, թե ինչպես պետք ե վարակել սերմերը.

7. ՅԵՐ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ

Սովորաբար սոյան ցանքում ե յեգիպտացորենի հետ միա-
ժամանակ, կամ մի քիչ ուշ:

Սառն հողի մեջ սերմերը ծլում են դանդաղ, բայց և

ուշացնել ցանքը չի կարելի, վարովինեան դրանից պահառում ե
բերքը և վատանում ե հատիկի վորակը:

Ցեղաշատություններում ցանքով պետք ե կատարել չուտ.
Հենինականի անսակափորձահողամասում ցանքը պովորաբար
կտարվում ե Մայիսի առաջին կեսին:

1928 թվին մայիսի 12-ին

1929 » » 6-ին

1930 » » 20-ին

Ցուրտ գարնանը ավելի լավ ե ցանքը ուշացնել, մին-
չե, վոր հողը լավ տաքանա, իսկ չոր ու տաք գարնանը ցան-
քը պետք ե կատարել վորքան կարելի յե շուտ, վորպեսզի
ծլերն ապահովված լինեն խոնավությունով:

Ընդհանրապես, տվյալ տեղի ու տեսակի ցանքսի ժամկետը
պետք ե վորոշել կատարված փորձերի հիման վրա:

Սոյան կարելի լի ցանել շաղացան և շարքացան:

Շաղացան անում են այն ժամանակ, յերբ սոյան մշտի-
վում ե խոտ ստանալու համար և յերբ գաշտը մոլախոտերից
ազատ ե. այդ դեպքում մի հեկտարի վրա հարկավոր ե ցա-
նել 80—100 կլգ. սերմ:

Սերմեր ստանալու համար ցանքը պետք ե անպայման
կտարել շարքացանով. կարելի լի ցանել սովորական հա-
ցանատիկների, յեգիպտացորենի, բամբակի և ճակն գեղի շար-
քացանով:

Ցանքով խտությունը կախված է հատիկների մեծությու-
նից. վորքան հատիկները փոքր են, այնքան քիչ և ցանքում:

Սոյափ ցանքը կտարելիս, ավելի ետան և սերմերի
հավասար դասավորումը գաշտում, ըան նրանց խտությունը.
սովորաբար մի հեկտարին ցանքում ե 32—50 կիլոգրամմ.՝
շարքերի միջի տարածությունը պետք ելիսի 50—60 սմ., իսկ
բույսերի միջի տարածությունը 10—15 սմ.,

Ցանքով առաջ պետք ե կարգի բերել շարքացանը, փակել

սպելորդ խողովակները և կանոնավորել խտությունը այն հաշվով, վոր ցանքին անհրաժեշտ քանակության սերմեր:

8. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԽՆԱՄԵԼ ՑԱՆՔՍԵՐԸ

Սովորաբար ծլում ե 10—15 որում, իսկ ցուրք կամ չոր լեզանակին ավելի ուշ:

Ալսպես, լենինականի տեսակավորձահողամասում առյան ծլեց՝

1928 թվի խոնավ և տաք գարնանը 10 որից հետո

1929 > չոր > > 31 > > և

1930 > բարենպաստ պայմաններում 10-12 > >

Դեռք ելավ հիշել, վոր սոյախ սերմերը ծլելու համար պահանջում են բավական շատ խոնավություն, իսկ քնքուշ ծլելերը կարիք ունեն փափուկ հողի և առաջին շրջանում վախենում են մոլախոտերից:

Ծլելուց անմիջապես հետո, ոկզրում, սոյան աճում և շատ դանդաղ, բայց արգեն առաջին քաղհանից հետո նկատվում ե ուժեղ զարգացում:

Առաջին քաղհանը չպետք ե ուշացնել. քաղհանն ու չափան պետք ե անել, հենց վոր բույսը հասավ 10—15 սմ. բարձրության, վորից հետո սոյան սկսում ե արագ աճել և խեղդում ե մոլախոտերը:

Մոլախոտերը շատ լինելու դեպքում, առաջին քաղհանը պետք է կատարել ավելի շուտ, այն ե ծիլերը լերեվալուն պես:

Յերկրորդ քաղհանը և չափան կատարվում են բույսը ծաղկելուց առաջ. դրանից հետո յել դաշտը պետք ե պահել մաքուր դրությամբ:

Բույսերի միջի տարածությունը քաղհանվում ե չափայով, իսկ շարքերի մեջ, աշխատանքը թեթևացնելու նպատակով ձեռքի կամ ձիու պլանետներով:

Զլինելով պահանջկոտ հողի ու խոնավության հանդեպ, սոյան սիրում ե ուշագիր և ժամանակին կատարվող խնամքը վառ մշակումից, ուշ ցանքսից, սխալ խտությունից, ուշ քաղ-



Միջարեյա մշակում (լենինականի տեսակափորձահողամասում)

հանից ու չափայից, վատ բերքահավաքից ու կալսելուց, — սոյալի բերքը զգալիորեն պակասում է:

Ցանքսաշրջանառության մեջ սոյան զբաղեցնում ե միջերկյա դաշտը:

9. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՎԱՐԵԼ ԲԵՐՔԸ.

Սոյան պետք ե սկսել հավաքել այն ժամանակ, յերբ տեկներն արդեն թափվել են, ցողուններն ու պատիճներն ստացել են գորշ գույն, իսկ հատիկները պնդացել: Խոտի համար քաղի ամենալավ ժամանակ համարվում ե ծաղկաթափը, յերբ նոր ծաղիկներ չեն առաջանում, պատիճները նոր են սկսել

կազմվել, իսկ ներքեզի տերեները դեռ չեն դեղնել:

Սոյան կարելի յե քաղել գերանգով, մանգաղով, խոտհարք մեքենայով. բուշյը արժատներով չպետք է հանել, քանի վոր այդ գեղքում հողը զոկվում ե այն բոլորից, ինչ վոր սովորաբար մնում ե լորիածաղիկների մշակութից հետո, այն ե պալարների ազոտից և որգանական նյութերից, վորոնք բարձրացնում են հողի բերքատվությունը:

Քաղելուց հետո սոլան հավաքում են փոքրիկ դեղերով, վորոնք 5-6 որ դաշտում պահելուց հետո, տեղափոխում են կալսելու տեղը։ Անձրեների դեղքում քաղը կարելի յե հետաձգել առանց բերքին վնասելու, վորովետե սոլաի հատիկները չեն թափվում։

Սոլան կալսում են կամով, ջարջառով, կամ սովորական կալսիչ մեքենայով. վերջին դեղքում կալսիչը պետք ե հարմարեցնել սոյաի հատիկներին, վորոնց մեծ մասը հակառակ դեղքում կարող ե ջարդվել։

Սերմերը մաքրելու և զտելու համար գործադրվում են սովորական քամիար ու զտիչ մեքենաները, համապատասխան մաղերով։

Սերմերը պետք ե պահել լավ չորացնելուց հետո և չոր պահեստում, վորովիետե նրանք հարուստ են յուղով ու յեթե լավ չեն չորացել կամ պահեւմ են խոնավ պահեստում, յուղը դառնանում ե սերմերը կորցնում են իրենց ծլունակությունը։

Մի շաբաթ հանգամանքներ՝ հողը, կլիման, տեսակը, սերմերի վորակը, ցանքսի ժամանակն ու ձեզ, հողի մշակումն ու ինչպէս ազդում են բերքի վրա։

Հյուսիսային Ամերիկայի միացյալ նահանգներում սոլաի բերքը կազմում ե մի հեկտարին 9,6-ից մինչև 13 ցենտներ։ 1926—27 թվի տվյալներով, Խորհրդային միության տարբեր կայաններում մի հեկտարից ստացվել եր 6,1-ից մինչև 15,6 ցենտներ։

Մի հեկտարից 5—6 ցենտները բերքը համարվում ե ցածր։ Իսկ 15—16 ցենտները լավ։

Առանձնակի նշանակություն լավ բերք ստանալու համար ունի տեսակը։

Հարմար տեսակի ընտրությունը կիսով չափ կազմակով բերքը։

10. ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԵՍԱԿԱՓՈՐՁԱՇՈՂԱՄԱՍԻ ՓՈՐՁԵՐԸ.

Լենինգրադի բուսաբանական ինստիտուտի Լենինականի տեսակափորձահողամասն սկսել ե սոլաի տեսակների ստուգումը 1928 թվին, նպատակ ունենալով պարզել, թե վոր տեսակներն են ավելի լավ աճում ու բարձր բերք տալիս մեր հողականացական պայմաններում։

Եերկու տարվա փորձերը տվին այն արդյունքը, վոր մեզ մտած կարող են մշակվել միջին և շուտ հասնող տեսակները, վորոնց աճման շրջանը, ցանքսից մինչև լրիվ հասունացումը, չի անցնում 145—150 որից։

Ավելի ուշ հասնող տեսակները, ինչպես որինակ «Բլինոյա» և «Ա. Կ Տ», վորոնց աճման շրջանն ավելի յե, չեն կարողանում լրիվ զարգանալ, նրանց սերմերը չեն հասնում ու ստացվում ե ցածր բերք։

Տեսակափորձահողամասն ստուգման յենթարկեց 1928 թ. 13 տեսակ, 1929 թվին 17 տեսակ և 1930 թվին 26 տեսակ, վորոնք մեծ մասամբ վերցված ելին Ամերիկան կայաններից, մասամբ ել հեռափոր արևելքից։ Կատարված ստուգամների արդյունքները, այն ե ցանքած գլխավոր տեսակների արտըլլուտ (1000 հատիկի) կշիռը, աճման ժամանակաշրջանը և բերքի քանակը յերկում են ներքեն բերված տախտակից։

ՄԻԶԻՑ 2 ՏԱՐՎԱ ՏՎՅԱԼՆԵՐԻՑ

ՑԱՌԿՆԵՐԻ ԸՆԹԱՆԻ	ԱՆՁԱՆ ՕՐՉԱՆ ՊՐԵՐՈՎ	ԱՐՅՈՒՅԱՆ ԿՈՒԱ ԳՐԱՄԵՐՈՎ	ՄԻ ՀԵԼԱՄԱՐԻց ՇԱՄ- ՎԱԾ ԲՆԵՐԸ ¹ ԾԵՆՆԵՐՆԵՐՈՎ
Մինսոյ . . .	132	125,99	7.66
Խաբարովսկի 109	142	140,19	8.94
Գունջուլինսկի .	142	156,95	8.16
Խարբինսկի 118 .	142	131,22	8.75
Խարբինսկի 111 .	132	123,31	7.90
Իլինոյ 13—19	170	70,55	3.25
Ա. Կ. . . .	170	95,40	5.94

Այդպիսով, ինչպես յերևում ե բերված տախտակի տրվածներից, լենինականի շրջանի պայմաններում, կարող են մշակվել միայն սիջն ու շուտ համնող տեսակները, վորոնց աճման շրջանը կազմում ե 132—142 որ:

Ամենից բիչ բերք մեզ մոտ տվին «Իլինոյ 13—19» և «Ա. Կ.» տեսակները, վորոնց աճման շրջանը համնում ե 170 որվա, իսկ «Գունջուլինսկի», «մինոյ» և մի շարք այլ վաղահաս տեսակների միջին բերքը հասավ 8—9 ցենտների:

Պետք ե ասել, վոր ու շ համնող տեսակները իրենց աճման ընթացքում զարգանում են ավելի փարթամ, բան վաղահաս տեսակները. նրանք ավելի բարձր են, ունին պատիճների ու սերմերի ավելի խոշոր քանակ, բայց սերմերի լրիվ չըհառնելու հետևանքով, տալիս են համեմատաբար ցածր բերք:

Այդ համեմատությունը յերևում ե հետեւալ տախտակից:

ՑԱՌԿՆԵՐԻ ԸՆԹԱՆԻ	ԲԱԼՅՈՒ ԲԱՐԵ- ՃՐԵՐՅՈՒՅՆՔ (ս.ր.)	ՊԱՏԻՃՆԵՐԻ ԲԱՆԱԿՐ մի բույսի վրա	ՊԱՏԻՃՆԵՐԻ ՀԵՐԿԱՊԱ- ՐՅՈՒՅՆՔ (ս.ր)	ՍԵՐՄԵՐԻ ԲԱՆԱԿՐ մի բույսի վրա
Մինսոյ . . .	27.5	170.5	2.8	260.5
Խաբարովսկի 109	29.0	200.5	3.2	322.5
Գունջուլինսկի .	28.1	187.0	3.1	334.5
Խարբինսկի 118 .	31.2	187.5	3.5	340.0
Խարբինսկի 111 .	31.3	241.0	2.6	380.5
Իլինոյ 13—19	47.4	331.0	2.9	634.5
Ա. Կ. . . .	33.7	203.0	3.0	327.0

Այդպիսով, «իլլինոյ» տեսակը, ունենալով մեկ և կեսանգամ ավելի բարձրություն և համարյա յերկու անգամ ավելի սերմ, քան «խաբարովսկի» 109, տեսակը, տալիս ե մաս յերեք անգամ պակաս բերք, իբրև հետևանք իր սերմերի լրիվ չեանելուն:

Լենինականի դաշտերը իբրև սոյախ մշակույթի համար նոր չքջան, չունին հողի մեջ համապատասխան բակտերիաները ու փորձեր կատարած տարիների ընթացքում արժատների վրա չեն նկատվել սոլախն հատուկ պալարներ:

Կասկած չկա, վոր մեզ մոտ ել, ինչպես և ուրիշ տեղերում, հողի և սերմերի վարակումը բակտերիաներով, զգալիքին կը բարձրացնի բերքի քանակը:

Այս տարվանից տեսակների ստուգումը կատարվեամ և նոր նրանց սերմերի ու հողի վարակումով:

11. ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ ՍՈՅԱ

ՍՈՅԱՆ պարաբտացնում ե հողը:

ՍՈՅԱՆ իր արժատների վրա ապլրող բակտերիաների միջոցով անհրաժեշտ ազուտն ստանում ե ողից:

ՍՈՅԱՆ հարստացնում ե հողը որպանական նյութով:

ՍՈՅԱՆ ունի ուժեղ զարգացած ու խորը թափանցող արժատներ, վորոնք վերցնում են անհրաժեշտ սնունդն ու ջուրը հողի խոր շերտերից:

ՍՈՅԱՆ պահանջկոտ չե. համեմատած ուրիշ բույսերի հետ, նոր ավելի լավ ե դիմանում յերաշտին, մշակվում ե վատորակ, բիչ բերք տվող հողերի վրա:

ՍՈՅԱՆ իբրև շարքաներկ ստվերաշատ բույս, մաքրում ե հողը մոլախուտերից:

ՍՈՅԱՆ բարձրացնում ե իրենից հետո ցանվող բույսերի բերքը:

ՍՈՅԱՆ տալիս ե սպիտակուցային նյութերով և լուղով հորուստ սերմեր:

ՍԱՅԱՆ արժեքավոր աեխնիքական բույս ե, վոր լայն չա-
փակ ոգտագործվում ե արդ, ունարերության մեջ:

ՄՈՅԱՆ տալիս ե բազմատեսակ մթերքներ սննդի համար:

ՄՈՅԱՆ փոխարինում ե միսը:

ՄՈՅԱՆ փոխարինում ե կաթը և բոլոր կաթնամթերքները:

ՄՈՅԱՆ տալիս ե սպիտակուցալին նյութերով հարուստ քուսպ:

ՄՈՅԱՆ տրվում ե անասուններին, իբրև համեղ կանաչ կեր,
խոտ և սիլոս:

ՄՈՅԱՆ ոգնում ե սերմափոխության անցնելուն:

ՄՈՅԱՆ բարձրացնում ե անտեսության ապրանքայնությունը:

20



20769